600.0010.27.01.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2016 թվականի №10Ա
քաղ. Երևան

«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագիրը կազմում է 3 809,78 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ հետևյալ հիմնական ուղղություններով.
   1) «Զովունի» 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցում՝ 2 441,07 մլն դրամ.
   2) շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 1 368,71 մլն դրամ:
2. Համաձայնություն տալ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրին՝ համաձայն №1 և №2 հավելվածների:
3. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) 2016 թվականին իրականացված ներդրումների արդյունքում շահագործման հանձնված հիմնական միջոցների մաշվածությունը կհաշվարկվի գծային եղանակով և կկիրառվի տարեկան 4 տոկոս մաշվածության նորմա.

2) 2016 թվականին իրականացված ներդրումների արդյունքում շահագործման հանձնված հիմնական միջոցների մնացորդային արժեքի նկատմամբ յուրաքանչյուր տարի կկիրառվի 10 տոկոս շահույթի նորմա՝ մինչև հարկումը.

3) մինչև 2016 թվականի հոկտեմբերի 15-ը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2017-2019 թվականների ներդրումային ծրագիրը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
27 հունվարի 2016 թ.
ժամը 16^{00}